ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<27 նոյեմբեր>> 2015թ
Ք. Եղեգնաձոր

N 102

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015Թ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ <<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2015թ պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին ենթակետով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.11.2015թ N 1362- Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ա/ <<Հայաստանի Հանրապետության 2015թ պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով Վայոց ձորի մարզպետարանին <<Հանրակրթական ուսուցում>> 09.01.02.01, 09.02.01.02 և 09.02.02.02 ծրագրերով հատկացված 1657827.0 հազ. դրամ գումարը բաշխել <<Հանրակրթական ուսումնական հաստատություն >> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 1 հավելվածի:

բ/ <<Նախադպրոցական կրթություն>> 09.01.01.01 ծրագրով հատկացված 19704.6 հազ. դրամ գումարը բաշխել <<Հանրակրթական ուսումնական հաստատություն >> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 2 հավելվածի:

գ/ << Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում>> 09.06.33 ծրագրերով 57106.6 հազ.դրամ գումարը բաշխել ըստ մարզպետի կողմից հաստատված N 3 հավելվածի:

2. Հանձնարարել մարզի <<Հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին հատկացված գումարների շրջանակներում կազմել ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների ծախսերի նախահաշիվներ և ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչություն:

3. *Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչության պետի վրա:*

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Վայոց Ձորի մարզպետարան

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ